

## Քննարկում՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի մոտ

08.04.2015



2015 թվականի ապրիլի 8-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ տեղի ունեցավ „Տեղական մակարդակում աղետների ռիսկի գնահատման,, ծրագրի շրջանակում „Ապավեն համայնքներին,, ԲՀԿ-ի կողմից մարզի թիրախ համայնքներում ( Ագարակաձոր, Արենի, Արփի, Արտաբույնք, Գետափ, Ելփին, Խաչիկ, Հորբատեղ, Մարտիրոս, Չիվա) իրականացված հետազոտությունների արդյունքների հիման վրա վեր հանված համայնքային հրատապ լուծում պահանջող խնդիրների վերաբերյալ քննարկում: Քննարկմանը մասնակցում էին մարզպետի տեղակալ Սամվել Թարվերդյանը, Վայոց ձորի փրկարարական վարչության պետ, փ/ծ մայոր Տիգրան Պետրոսյանը և „Ապավեն համայնքներին,, ԲՀԿ-ի գործադիր տնօրեն Սուսաննա Օսանյանը, ինչպես նաև ծրագրի աշխատանքներով զբաղվող մարզային ներկայացուցիչներ և „Ապավեն համայնքներին,, ԲՀԿ-ի ներկայացուցիչներ:

Մարզպետ Հարություն Սարգսյանը նախ ողջունեց և այցի համար շնորհակալություն հայտնեց հյուրերին, ապա հետաքրքրվեց հետազոտությունների արդյունքում առանձնացված համայնքային հրատապ խնդիրների լուծման նպատակով կազմված աշխատանքային ծրագրով: Մարզպետի առաջարկով առանձին-առանձին համայնքների ղեկավարների մասնակցությամբ քննարկվեցին յուրաքանչյուր համայնքի հետ կապված խնդիրները և դրանց լուծման հնարավորությունները: Ծրագրի այս փուլում ընդգրված չէր միայն Մարտիրոս համայնքի ծրագիրը: Մարզպետն առաջարկեց, առաջիկայում տեղում ուսումնասիրելուց հետո, ևս մեկ անգամ ճշտել ներկայացված խնդիրներից համայնքի համար ամենահրատապայինը, կատարել հաշվարկները և կազմել նախահաշիվները, որից հետո կրկին կազմակերպել քննարկում, իսկ այնուհետ սկսել նախատեսվող ոչ խոշոր շինարարական աշխատանքները: Նա նշեց, որ որքան էլ փոքրիկ խնդիր լուծվի, այնուամենայնիվ փոքր բյուջե ունեցող համայնքների համար դա շատ կարևոր օժանդակություն է:

Մարզպետն ամփոփիչ խոսքում շնորհակալություն հայտնեց „Ապավեն համայնքներին,, ԲՀԿ-ի գործադիր տնօրեն Սուսաննա Օսանյանին ու ծրագրում ընգրկված աշխատակիցներին և հաջողություն մաղթեց ապագա համագործակցային աշխատանքներում: